Հայտարարություն

Սոցիալական Պաշտպանության Վարչարարության Երկրորդ Ծրագիր

No: 5398-AM

ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» պետական հիմնարկը հայտնում է, որ Համաշխարհային բանկի «**Սոցիալական Պաշտպանության Վարչարարության երկրորդ ծրագիր»** վարկային ծրագրի շրջանակում **«Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի առաջնային շահառուների կարիքների և այդ ծրագրերի մասին նրանց կարծիքի ուսումնասիրության, ՄԳ համակարգի համար անհրաժեշտ տեղեկությունների հավաքման համակարգի ներդրմանն ուղղված առաջարկների մշակման»** առաջադրանքը իրականացնելու նպատակով հայտարարվում է խորհրդատվական ընկերության ընտրության մրցույթ:

Այս առաջադրանքի նպատակն է աջակցել ԱՍՀՆ իրավասության ոլորտում իրականացվող ծրագրերի մոնիթորինգի և գնահատման համակարգի ներդմանն ու կատարելագործմանը՝ այդ ծրագրերի շահառուների կարիքների գնահատման և ՄԳ համար անհրաժեշտ որակական ցուցանիշների համար տվյալների հավաքագրման միջոցով:

Ընտրված խորհրդատվական ընկերությունը պետք է իրականացնի հետեւյալ առաջադրանքները՝

1. ձևավորի ՍՊ ոլորտում իրականացվող շուրջ 65 առանցքային ծրագրերից 14-ի որակական ցուցանիշների համար տվյալների հավաքագրման հետազոտությանմեթոդաբանությանը համապատասխան գործիքակազմը, ներկայացուցչական ընտրանքը և այդ ծրագրերի շահառուների շրջանում իրականացնի հարցումներ (հարցազրույցներ, ֆոկուս խմբեր և այլն), կազմի հետազոտության հաշվետվություն (թղթային և էլեկտրոնային),
2. ձևավորի ՍՊոլորտում իրականացվող մնացած 51 առացքային ծրագրերից 26-ի և 10 ուղեկցող ծրագրերի մոնիթորինգային որակական ցուցանիշների համար տվյալների հավաքագրման հետազոտության գործիքակազմը, անհրաժեշտ ներկայացուցչական ընտրանքը և այդ ծրագրերի շահառուների շրջանում իրականացնի հարցումներ (հարցազրույցներ, ֆոկուս խմբեր և այլն), կազմի հետազոտության հաշվետվություն (թղթային և էլեկտրոնային),
3. մշակի ԱՍՀՆ ենթակայությանը հանձնված խնամք և սպասարկում իրականացնող 22 ՊՈԱԿ-ների կողմից տրամադրվող ծառայությունների ՄԳ ցուցանիշները, ձևավորի դրանց համար տվյալների հավաքագրման հետազոտության մեթոդաբանությանը համապատասխան գործիքակազմը, ներկայացուցչական ընտրանքը և իրականացնի հարցումներ (հարցազրույցներ, ֆոկուս խմբեր և այլն), հավաքագրի մոնիթորինգային բոլոր ցուցանիշների տվյալները և իրականացնի գնահատում, կազմի մոնիթորինգի և գնահատման հաշվետվություն (թղթային և էլեկտրոնային),

4. ձևավորի ՍՊ ոլորտում իրականացվող մնացած 25 առանցքային ծրագրերի և 9 ուղեկցող ծրագրերի, ինչպես նաև ՍՊՎԾ-2-ի 2-րդ բաղադրիչի «Աշխատաշուկայի ակտիվ ծրագրեր» ենթաբաղադրիչի շրջանակում իրականացվող «Փոքր բիզնեսի խթանման ծրագրի» մոնիթորինգային որակական ցուցանիշների համար տվյալների հավաքագրման հետազոտությանը համապատասխան գործիքակազմը, ներկայացուցչական ընտրանքը և այդ ծրագրերի շահառուների շրջանում իրականացնի հարցումներ (հարցազրույցներ, ֆոկուս խմբեր և այլն), կազմի հետազոտության հաշվետվություն (թղթային և էլեկտրոնային),
5. իրականացնի նախորդ կետերում նշված աշխատանքներից յուրաքանչյուրի արդյունքների մասին՝ իր կազմած հաշվետվությունների նախագծերի ներկայացում ԱՍՀՆ ՄԳ համակարգի պատասխանատու աշխատակիցներին՝ սեմինար-քննարկումների կազմակերպման միջոցով,
6. մասնակցի ԱՍՀՆ ՄԳ ստորաբաժանման կողմից իրականացվելիք՝ ԱՍՀՆ համակարգի ծրագրերի վերջնական ՄԳ աշխատանքներին, գնահատման ամփոփ հաշվետվությունների կազմման գործընթացին:

Խորհրդատվական կազմակերպությունը պետք է ունենա՝

1. Սոցիալական պաշտպանության կամ հանրային կառավարման այլ ոլորտներում սոցիոլոգիական հետազոտությունների իրականացման առնվազն հինգ տարվա փորձ,
2. Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացված առնվազն 2 հետազոտական ծրագիր,
3. ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության ոլորտի հիմնախնդիրների հետազոտության առնվազն երեք տարվա փորձառությամբ որակավորում ունեցող մասնագետներ,
4. ՄԳ մեթոդաբանության մշակման և սոցիոլոգիական հետազոտությունների իրականացման առնվազն երեք տարվա փորձառությամբ որակավորում ունեցող մասնագետներ:

Վերը շարադրված պահանջներին համապատասխանող խորհրդատվական ընկերությունները կարող են մինչեւ **սույն թվականի մարտի 24-ը** ներկայացնել հետաքրքրվածության հայտեր անհրաժեշտ տեղեկություններով (ընկերության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն՝ ընդհանուր աշխատանքային փորձի, այդ թվում վերջին տարիներին նմանատիպ հանձնարարականների իրականացման փորձի, վերընշված պահանջներին բավարարող անձնակազմի առկայության վերաբերյալ, աշխատակազմի կենսագրական թերթիկները եւ այլն) ստորեւ նշված հասցեով:

Հետաքրքրվածության հայտերը կարող են ներկայացվել նաեւ էլեկտրոնային փոստով:

ՀՀ Ֆինանսների նախարարության
«Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն պետական
հիմնարկի գործադիր տնօրեն՝ Է. Ավետյանին
Երեւան 0010, Տիգրան Մեծի փողոց 4
Հեռախոս. (374 11) 910581
Էլ. փոստ. info@ffpmc.am